ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (այսուհետև՝ կուսակցություն) իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ միջազգային պայմանագրերի, ՀՀ օրենսդրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.2. Կուսակցությունը գործում է ժողովրդավարության և նախաձեռնությունների ազատ դրսևորման սկզբունքներով, օգտվում է ՀՀ Սահմանադրության ընձեռած բոլոր իրավունքներից և կրում պարտավորություններ:

1.3. Կուսակցությունը ձգտում է ժողովրդավարական ընտրությունների միջոցով ապահովել իր ներկայացուցչությունը ՀՀ Ազգային ժողովում և տեղական ինքնակառավարման մարմիններում. այդ ճանապարհով մասնակցում է պետական իշխանության մարմինների ձևավորմանն ու պետական քաղաքականության մշակմանը:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կուսակցությունն իր գործունեության գլխավոր նպատակն ու խնդիրն է համարում՝

- հայոց ազգային անկախ պետականության ամրապնդումը և զարգացումը,
- ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կերտումը,
- ՀՀ Սահմանադրության շրջանակներում իշխանությունների կազմավորման գործընթացին, պետության կառավարմանը նպաստելը,
- ՀՀ քաղաքական մթնոլորտի կայունացմանը և ամրապնդմանը նպաստելը,
- քաղաքացիական հասարակության կառուցմանն օժանդակելը:

3. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Կուսակցության անդամները պետք է ընդունեն Կուսակցության ծրագիրը, գործեն Կանոնադրության շրջանակներում և չհանդիսանան այլ կուսակցության անդամ:

Կուսակցության անդամ կարող են լինել 18 տարին բոլորած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքով օժտված այլ անձինք՝ առանց կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքի:

3.2. Կուսակցությանն անդամագրվում են անձնական դիմումի համաձայն.

- կուսակցության տարածքային կազմակերպության խորհրդի որոշմամբ,
- կուսակցության մարզային կազմակերպության խորհրդի որոշմամբ,
- կուսակցության կազմակերպչական հանձնաժողովի որոշմամբ:

3.3. Կուսակցության անդամն անդամագրվում է կուսակցության որևէ սկզբնական կազմակերպության:

3.4. Կուսակցության անդամը մուծում է անդամավճար (չափը կամավոր է):

3.5. Եթե Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով անդամակցությունը կուսակցությանն անթույլատրելի է դառնում, այն կասեցվում է կուսակցության անդամի դիմումի հիման վրա, տարածքային կազմակերպության խորհրդի կամ կուսակցության կազմակերպչական հանձնաժողովի որոշմամբ: Կասեցման վերացումը կատարվում է նույն կարգով:

3.6. Կուսակցության անդամն իրավունք ունի՝

- ընտրել և ընտրվել ղեկավար մարմիններում,
- կուսակցության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել առաջարկություններ,
- մասնակցել այն ժողովին և նիստին, որտեղ քննարկվում է նրա անձնական հարցը կամ առաջարկությունը, արտահայտել իր կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ,
- դուրս գալ կուսակցության շարքերից՝ իր դիմումի համաձայն,

- բողոքարկել կուսակցության տարածքային և ղեկավար մարմինների որոշումները համապատասխան ղեկավար մարմիններում:

3.7. Կուսակցության անդամը պարտավոր է՝

- գործել կուսակցության կանոնադրության շրջանակներում,
- կատարել կուսակցության վերադաս մարմինների որոշումները,
- մասնակցել իր սկզբնական կազմակերպության ժողովներին և միջոցառումներին:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կուսակցության կառուցվածքային հիմքը կուսակցության սկզբնական կազմակերպություններն են: Սկզբնական կազմակերպությունը բաղկացած է կուսակցության առնվազն 15 անդամից: Սկըզբ-նական կազմակերպությունն ստեղծվում է տարածքային կամ նպատակային սկզբունքներով:

Սկզբնական կազմակերպություն կարող են ձևավորել՝

- կուսակցության կազմակերպչական հանձնաժողովը,
- կուսակցության մարզային խորհուրդը,
- կուսակցության տարածքային խորհուրդը:

4.2. Սկզբնական կազմակերպության ժողովը հրավիրվում է առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Կազմակերպության ժողովը օրինական է, եթե ժողովին մասնակցում են կազմակերպության անդամների 2/3-ը: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց կամ փակ քվեարկությամբ: Փակ քվեարկությունն անցկացվում է ներկաների 1/3-ի պահանջով:

4.3. Կազմակերպության ժողովն ընտրում է կազմակերպության նախագահ՝ բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամանակով: Սկզբնական կազմակերպության ժողովի որոշմամբ կարող է կատարվել սկզբնական կազմակերպության նախագահի վաղաժամկետ ընտրություն:

4.4. Սկզբնական կազմակերպությունը հաշվետու է կուսակցության տարածքային խորհրդին: Կազմակերպությունը ներկայացնում է հաշվետվություն տարին մեկ անգամ՝ կազմակերպության նախագահի կողմից՝ հաջորդ տարվա հունվար ամսվա ընթացքում: Կուսակցության հերթական համագումարից հետո, 10 օրվա ընթացքում սկզբնական կազմակերպությունը կատարում է կազմակերպության նախագահի նոր ընտրություն:

4.5. Սկզբնական կազմակերպությունը իր դրամական եկամուտները (անդամավճարներ, նվիրատվություն) փոխանցում է կուսակցության տարածքային խորհրդին:

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Մարզերի ենթաշրջաններում և Երևան քաղաքի թաղային համայնքներում ստեղծվում են կուսակցության տարածքային կազմակերպություններ: Սկզբնական կազմակերպության նախագահներն ի պաշտոնե տարածքային կազմակերպության խորհրդի անդամներ են:

5.2. Կուսակցության տարածքային խորհրդի նախագահն ընտրվում է կուսակցության տարածքային խորհրդի անդամների կազմից՝ բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամանակով: Տարածքային խորհրդի որոշմամբ կարող է կատարվել տարածքային խորհրդի նախագահի վաղաժամկետ ընտրություն: Այն սկզբնական կազմակերպությունը, որի նախագահն ընտրվում է տարածքային խորհրդի նախագահ, ընտրում է նոր նախագահ: Կուսակցության հերթական համագումարից հետո, 20 օրվա ընթացքում կատարվում է տարածքային խորհրդի նախագահի նոր ընտրություն:

5.3. Կուսակցության տարածքային խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Նիստը օրինական է, եթե մասնակցում են խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց կամ փակ քվեարկությամբ: Փակ քվեարկությունը անցկացվում է ներկաների 1/3-ի պահանջով: Կուսակցության տարածքային խորհուրդը իր գործունեության մասին հաշվետու է մարզային խորհրդին, հաշվետվությունը ներկայացվում է տարին մեկ անգամ՝ կուսակցության տարածքային խորհրդի նախագահի կողմից: Կուսակցության տարածքային խորհուրդը իր

դրամական եկամուտները փոխանցում է մարզային խորհրդին, որի որոշմամբ դրանք կարող են թողնվել տարածքային խորհրդի տնօրինությանը: Կուսակցության տարածքային խորհուրդը ծախսերի մասին հաշվետվությունը յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում է մարզային խորհրդին:

5.4. Կուսակցության տարածքային խորհուրդն իրավունք ունի կուսակցության սկզբնական կազմակերպությունը լուծարելու հարց բարձրացնել կուսակցության մարզային խորհրդի առջև:

5.5. Երևան քաղաքի համայնքների տարածքային խորհուրդները իրենց գործունեության մասին հաշվետվություն են ներկայացնում կուսակցության խորհրդին:

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Հայաստանի Հանրապետության մարզերում ստեղծվում են մարզային կուսակցական կազմակերպություններ, որոնք կուսակցության տարածքային ստորաբաժանումներն են: Մարզային խորհուրդը կազմվում է մարզի տարածքում գործող տարածքային կազմակերպությունների նախագահներից:

6.2. Կուսակցության մարզային խորհրդի նախագահն ընտրվում է մարզային խորհրդի անդամների կազմից՝ բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամանակով: Մարզային խորհրդի որոշմամբ կարող է կատարվել մարզային խորհրդի նախագահի վաղաժամկետ ընտրություն: Այն տարածքային կազմակերպությունը, որի ղեկավարն ընտրվում է մարզային խորհրդի նախագահ, ընտրում է նոր ղեկավար: Հերթական համագումարից հետո, մեկ ամսվա ընթացքում տեղի է ունենում մարզային խորհրդի նիստ, որը կատարում է մարզային խորհրդի նախագահի նոր ընտրություն:

6.3. Կուսակցության մարզային խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Նիստը օրինական է, եթե մասնակցում են խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Մարզային խորհրդի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց կամ փակ քվեարկությամբ: Փակ քվեարկությունը անցկացվում է ներկաների 1/3-ի պահանջով:

6.4. Կուսակցության մարզային խորհուրդը իր գործունեության մասին հաշվետու է կուսակցության խորհրդին: Հաշվետվությունը ներկայացվում է տարին մեկ անգամ՝ կուսակցության մարզային խորհրդի նախագահի կողմից:

6.5. Կուսակցության մարզային խորհուրդն իր դրամական եկամուտները փոխանցում է կուսակցության ղեկավար մարմիններին: Կուսակցության խորհրդի որոշմամբ դրանք կարող են թողնվել մարզային խորհրդի տնօրինությանը, որը ծախսերի մասին հաշվետվությունը յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում է կուսակցության խոր-հրդի նախագահին:

6.6. Կուսակցության մարզային խորհուրդը կարող է լուծարել կուսակցության սկզբնական կազմակերպությունը՝ իր նախաձեռնությամբ կամ կուսակցության տարածքային կազմակերպության առաջարկով: Կուսակցության մարզային խորհուրդը կուսակցության տարածքային կազմակերպության լուծարման հարցը կարող է ներկայացնել կուսակցության խորհուրդ:

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

7.1. Կուսակցության խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել և լուծարվել կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք ունեն տարածքային կազմակերպության կարգավիճակ:

8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

8.1. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը կուսակցության խորհուրդն է:

Կուսակցության խորհուրդը ընտրվում է կուսակցության համագումարում: Կուսակցության խորհրդի անդամների թեկնածուններն առաջադրվում են համագումարի պատվիրակների կողմից: Կուսակցության խորհուրդը համարվում է կազմավորված, եթե ընտրված է նրա անդամների առնվազն 2/3-ը:

8.2. Կուսակցության խորհրդի անդամների թիվը որոշում է կուսակցության համագումարը: Կուսակցության խորհրդի անդամների ընտրությունը կատարվում է փակ քվեարկությամբ: Ընտրված են համարվում համագումարի պատվիրակների առավել ձայներ ստացած թեկնածուները:

8.3. Կուսակցության խորհուրդն իր կազմից ընտրում է կուսակցության խորհրդի նախագահ՝ բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամանակով: Եթե առաջադրվել են երկու թեկնածու, ապա ընտրված է համարվում առավել ձայն ստացած թեկնածուն: Կուսակցության խորհրդի որոշմամբ կարող է կատարվել կուսակցության խորհրդի նախագահի վաղաժամկետ ընտրություն:

8.4. Կուսակցության խորհրդի նախագահը և կուսակցության խորհուրդը կուսակցության ղեկավար մարմիններն են: Կուսակցության խորհրդի անդամը չի կարող լինել այլ խորհրդի անդամ:

8.5. Խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն երկու շաբաթը մեկ անգամ: Կուսակցության խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամների 1/3-ը կարող են հրավիրել արտահերթ նիստ: Նիստը օրինական է, եթե ներկա են խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

8.6. Կուսակցության խորհրդի անդամը կարող է կասեցնել իր գործունեությունը խորհրդում: Կուսակցության խորհրդի անդամի գործունեության կասեցման հարցը կարող է քննարկվել նաև կուսակցության խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Որոշումը կայացվում է կուսակցության խորհրդի անդամների ձայների 2/3-ով, բաց քվեարկությամբ: Կուսակցության խորհուրդը իրավազոր է, եթե պահպանվում է նրա կազմի 2/3-ը:

8.7. Կուսակցության խորհուրդը՝

- հրավիրում է կուսակցության հերթական կամ արտահերթ համագումար,
- կազմակերպում է կուսակցության համագումարի հրավիրման նախապատրաստական աշխատանքները,
- վերահսկում է համագումարի և իր որոշումների կատարումը,
- մշակում է կուսակցության գաղափարախոսական հիմնադրույթները, ծրագրային և կանոնադրական փաստաթղթերը, կուսակցության մարտավարական սկզբունքները, կուսակցության անունից անում է հայտարարություններ և առաջարկություններ,
- համակարգում է Ազգային ժողովում, տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրված կուսակցության անդամների աշխատանքները,
- կազմակերպում է հանձնաժողովներ և հանձնախմբեր: Կուսակցության խորհրդի նախագահի ներկայացմամբ հաստատում է հանձնաժողովների նախագահների թեկնածությունները,
- կազմում է կուսակցության կազմակերպչական հանձնաժողով,
- իրագործում է հսկողություն կուսակցության մամուլի, լրատվական և հրատարակչական ծառայությունների գործունեության նկատմամբ,
- կարող է իր կամ կուսակցության մարզային խորհրդի առաջարկությամբ լուծարել կուսակցության տարածքային կազմակերպությունը,
- կարող է լուծարել կուսակցության մարզային կազմակերպությունը,
- հաստատում է կուսակցության խորհրդի նախագահի կողմից առաջադրված կուսակցության խորհրդի նախագահի տեղակալների թեկնածությունները,
- տարին մեկ անգամ լսում է կուսակցության մարզային խորհուրդների հաշվետվությունները,
- հաստատում է ՀՀ Ազգային ժողովում և տեղական ինքնակառավարման մարմիններում կուսակցության կողմից առաջադրվող թեկնածուներին,
- հաստատում է կուսակցության նախընտրական ծրագիրը,
- կուսակցության խորհուրդը դադարեցնում է իր լիազորությունները հերթական կամ կուսակցության խորհրդի ընտրության օրակարգով հրավիրված արտահերթ համագումարի սկսելու օրը:

8.8. Կուսակցության խորհրդի նախագահը՝

- ներկայացնում է կուսակցության շահերը և դիրքորոշումը պետական մարմինների, հասարակական, քաղաքական և միջազգային կազմակերպությունների հետ ունեցած հարաբերություններում կամ դրա համար լիազորում է կազմակերպության այլ անդամների,

- հաստատում է կուսակցության խորհրդի որոշումը կուսակցության պաշտոնաթերթի և այլ պարբերականների հրատարակման մասին,
- կարող է ունենալ տեղակալներ: Նրանց թեկնածությունը կուսակցության խորհրդի կազմից առաջադրում է կուսակցության խորհրդի նախագահը: Կուսակցության խորհրդի նախագահի հանձնարարությամբ տեղակալը վարում է կուսակցության խորհրդի նիստերը, փոխարինում է կուսակցության խորհրդի նախագահին, կատարում է այլ հանձնարարականներ,
- կազմավորում է իր աշխատակազմը:

9. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

9.1. Ներկայացուցչական ժողովի մասնակիցներն են՝

- կուսակցության խորհուրդը,
- կուսակցության մարզային խորհուրդները,
- կուսակցության անդամ Ազգային ժողովի պատգամավորները,
- կուսակցության անդամ կառավարության անդամները,
- կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումների և հանձնաժողովների ղեկավարները:

Ներկայացուցչական ժողովին կարող են մասնակցել նաև կուսակցության խորհրդի որոշմամբ հրավիրված այլ անձինք:

9.2. Ներկայացուցչական ժողովը քննարկում է կուսակցության գործունեությանը վերաբերող կարևորագույն հարցեր:

9.3. Ներկայացուցչական ժողովը հրավիրվում է առնվազն եռամսյակը մեկ անգամ: Կուսակցության խորհրդի որոշմամբ կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

10. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

10.1. Կուսակցության համագումարը կուսակցության բարձրագույն մարմինն է, որի ընդունած որոշումները պարտադիր են կուսակցության մարմինների, անդամների համար:

10.2. Կուսակցության հերթական համագումարները հրավիրվում են երկու տարին մեկ անգամ: Կուսակցության խորհրդի որոշմամբ կարող է հրավիրվել արտահերթ համագումար: Հերթական համագումարի հրավիրումից մեկ ամիս առաջ կուսակցության խորհուրդը հրավիրում է կուսակցության խորհրդի ընդլայնված նիստ, որտեղ քննարկվում է համագումարի օրակարգի նախագիծը:

10.3. Կուսակցության համագումարի պատվիրակների ընդհանուր թիվը որոշում է կուսակցության խորհուրդը՝ ելնելով կուսակցության անդամների ընդհանուր թվից: Պատվիրակները առաջադրվում են տարածքային կազմակերպությունների ընդհանուր ժողովներում: Համագումարն իրավազոր է, եթե ներկա է (գրանցված է) պատվիրակների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը: Համագումարի որոշումներն ընդունվում են բաց կամ փակ քվեարկությամբ, ներկաների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ կանոնադրության ու ծրագրի ընդունման, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու, կուսակցության վերակազմակերպման ու լուծարման, ինչպես նաև կուսակցության կողմից հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու մասին հարցերի, որոնց դեպքում որոշումներն ընդունվում են պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Փակ քվեարկությունն անցկացվում է ներկաների ձայների 1/3-ի պահանջով:

10.4. Կուսակցության համագումարը՝

- լսում և հաստատում է կուսակցության խոր-հրդի հաշվետվությունը,
- քննարկում և հաստատում է կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը, փոփոխություններ և լրացումներ է կատարում դրանց մեջ,
- ընտրում է կուսակցության խորհուրդ,
- լսում և հաստատում է կուսակցության վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը,

- որոշում է կուսակցության ռազմավարական-քաղաքական ուղին, կուսակցության նպատակների իրագործման գործելակերպը,
- ընտրում է կուսակցության վերստուգիչ հանձնաժողով՝ կուսակցության ֆինանսական գործունեության վերահսկման համար, որի անդամների թիվը հաստատում է կուսակցության համագումարը: Վերստուգիչ հանձնաժողովի անդամը կուսակցության խորհրդի անդամ լինել չի կարող,
- վերստուգիչ հանձնաժողովի անդամներն ընտրում են հանձնաժողովի նախագահ: Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է միայն կուսակցության համագումարին,
- որոշում է ընդունում կուսակցության լուծարման մասին: Լուծարման հարցը համագումարի օրակարգ կարող է մտցվել կուսակցության խորհրդի որոշմամբ: Լուծարման մասին որոշում ընդունվում է պատվիրակների ձայների առնվազն 2/3-ով, բաց քվեարկությամբ: Կուսակցության լուծարման մասին որոշում ընդունելուց հետո ստեղծվում է լուծարային հանձնաժողով, որը ՀՀ օրենքով սահմանված կարգով, տնօրինում է կուսակցության գույքային և ֆինանսական միջոցները՝ համաձայն համագումարի որոշման:

11. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

11.1. Կուսակցության դրամական միջոցները ձևավորվում են՝

- անդամավճարներից,
- օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

11.2. Կուսակցությանը սեփականության իրավունքով կարող են պատկանել ծրագրային և կանոնադրական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ շինություններ, դրամական, փոխադրական միջոցներ, գույք:

11.3. Դրամական միջոցները տնօրինում են կուսակցության խորհրդի նախագահը, կուսակցության խորհուրդը և կուսակցության մարզային կազմակերպությունների խորհուրդներն՝ ըստ կուսակցության խորհրդի կողմից հաստատված նախահաշվի:

12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.1. Կուսակցությունն ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

12.2. Կուսակցությունն ունի դրոշ, անվանաթուղթ, կլոր կնիք՝ խորհրդանիշով (որտեղ պատկերված է հայկական ավանդական հավերժանշանը՝ ութ թերթիկներով աջ պտույտով, կենտրոնում՝ սուր և թևերը տարածած արծիվ), ունի հաշվարկային հաշիվ բանկում, ինչպես ազգային դրամով, այնպես էլ արտարժույթով: Կուսակցության կնիքը իրավասու է օգտագործել միայն կուսակցության խորհրդի նախագահը կամ կուսակցության խորհրդի անդամը՝ կուսակցության խորհրդի նախագահի որոշմամբ:

ՀՀԿ իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան 2: